# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՈՐՈՇՈՒՄ

11 նոյեմբերի 2019 թ. N 921-Ն

ք. Ստեփանակերտ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 30-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» աղյուսակում 4.4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| Վերահսկողական բնույթի հարցեր | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4.4. | Չեն իրացվում անհայտ ծագում ունեցող սերմնանյութ և տնկանյութ | | | | ակնադիտական և փաստաթղթային զննում | «Բուսասանիտարիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մաս | |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***«Հաստատում եմ»***

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ***
***ՆԱԽԱԳԱՀ*** ***Բ. ՍԱՀԱԿՅԱՆ***